նկարագիրը։ Եւ ժամանակի ընթացքին անցնելով Միջագետքի զանազան ցեղերէն եւ փիւնիկէէ ալ Յունաստան եւ դէպի Արեւմուտք, պիտի ենթարկուէր նոր եւ հզօր ներգործութիւններու. եւ երբեւ արդիւնք տիրող Քաղաքակրթութեան, պիտի քանդակուէր անոր պատկերն ու էութիւնը նոյն իսկ կարծր մարմիններու վրայ։

Անդին, սակայն, իր բնավայրին մէջ, ճիւղերէն զրկուած իր իրանը կրկին վերընձիւղելով պիտի աճէր ու հովանաւորէր շրջակայ ազգերն ու ցեղեր և թափ տալով իր յարաճուն պտուղկումին, Նոյն իսկ բերանացի աւանդութեամբ, պիտի հասնէր մինչև մեր օրերը և հանգչէր Հայ Ձայնագրութեամբ ճարտարապետուած հանգստաւէտ պատուանդանին վրայ, մէկ ու կէս դարու անցնելով։

Ուրեմն, Երաժշտութեան այս երկու ճիւղերուն անցուցած շրջանները և իրարմէ տարբերացած կէտերը ըստ կարելւոյն պարզելով, կը կարծենք ծառայութիւն մը մատուցած ըլլալ Արեւելեան դրոշմը կրող ազգերու, ինչպէս նաև մեր Հայոցս, երգերու մասին արտայայտուիլ փափաքողներուն։

Ն. Թ. ԽԻՏԱՎԷՐՏԵԱՆ

(ՎԵՐՋ)

## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

### ՀԵՌԱԳԻՐ Ս. ԷՋՄԻԱԾՆԷՆ

Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնի եւ Ամանորի առթիւ, Նորին Ս. Օծութիւն, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 7 Յունուար 1948 թուակիր հեռագիրը ուղղուած Ամեն. Ս. Պատրիարք Հօր, ի պատասխան Անոր 2 Յունուար թուակիր շնորհաւորական հեռագրին:

*Ամենապատիւ Սրբազան Պատրիարքին*
*Երուսաղէմի*

*«Սրտագին շնորհաւորութիւններս Ամանորի եւ Աստուածայայտնութեան տօների առթիւ Ձեզի, Միաբանութեանդ, Հոգեւոր դասին եւ Մեր սիրեցեալ հօտին՝ Հայրապետական օրհնութիւնս եւ բարեմաղթութիւններս:*

*Օրացոյցները ուղարկուեցին Նոյեմբերի 30ին»:*

ԳԷՈՐԳ Զ.

---

*Նորին Ս. Օծութիւն*
ԳԷՈՐԳ Զ.
*Վեհափառ Կաթողիկոս Ամենայն Հայոց*
*Էջմիածին*

*«Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնի եւ Ամանորի առթիւ, Ձերդ Ս. Օծութեան կը ներկայացնենք մեր ջերմագին շնորհաւորութիւնները, մաղթելով Ձեզ մեծագոյն յաջողութիւններ յօգուտ Հայաստանեայց Մայր Եկեղեցւոյ եւ բարգաւաճութիւն Հայրենիքի փառապանծ վերելքին»:*

ԿԻՒՐԵՂ Բ.
*Պատրիարք Երուսաղէմի*

## ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

✱ 3 Յուն. Շբ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր, պատարագիչն էր Հոգ. Տ. Միւռոն Վրդ. Կրճիկեան։

✱ 4 Յուն. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր Գողգոթայի մատրան մէջ, պատարագիչն էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան։

Վաղուան Սրբոցն՝ Դաւթի մարգարէին եւ Յակոբայ Տեառնեղբայր առաքելոյն տօնին առթիւ, երեկոյեան պաշտամունքէն անմիջապէս առաջ, Ս. Պատրիարք Հայրը «Հրաշափառով մուտք գործեց Ս. Յակոբեանց Մայր Տաճարը և նախագահեց պաշտամունքին և նախատօնակին։ Յետոյ, թափօրով առաջնորդուեցաւ պատրիարքարան, ուր «Պահպանիչ»էն վերջ՝ տեղի ունեցաւ պատուասիրութիւն։

✱ 5 Յուն. Բշ. — Ս. Աթոռոյս տօնին առթիւ Ս. Պատրիարք Հայրը նախագահեց առաւօտեան պաշտամունքին և արարողութեանց։ Հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւագ Սեղանին վրայ։ Պատարագեց և քարոզեց Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեան, վեր հանելով տօնին նշանակութիւնը իր կրօնական, եկեղեցական և ազգային կողմերով և սրտաբուխ մաղթանքներ կատարեց Ս. Աթոռոյ եւ Հայաստանեայց Մայր Աթոռոյ անսասանութեան եւ պայծառութեան համար։ Ըստ հնաւանդ սովորութեան առաւօտեան պաշտամունքի միջոցին «Փառք ի բարձունս»ի ատեն Ս. Պատրիարքը զգեստաւորուած շուրջառով և Շղթայակիր Գրիգոր պատրիարքի եմիփորոնով պատրիարքական գաւազան և խաչ ի ձեռին բարձրացաւ Ս. Աթոռ և մնաց մինչև պաշտամունքի վախճանը և անմիջապէս յետոյ ընդունեց Միաբանութեան շնորհաւորութիւնը։ Զկնի Ս. Պատարագի Նորին Ամենապատուութիւնը թափօրով առաջնորդուեցաւ պատրիարքարան ուր «Պահպանիչ»էն յետոյ տեղի ունեցաւ պատուասիրութիւն։

Երեկոյին՝ վաղուան Ս. Ստեփաննոսի տօնին առթիւ Ս. Պատրիարք Հայրը նախագահեց պաշտամունքին և նախատօնակին։ Ըստ սովորութեան երգեցողութիւնները ղեկավարուեցան Սարկաւագաց և Ուրարակրաց կողմէ։ Սարկաւագութեան պաշտօն կը կատարէին Հոգ. Տ. Տ. Հայկազուն և Միւռոն Վարդապետներ։

Այսօր, առաւօտուն, Ս. Աստուածածնայ տաճարին մէջ Ս. Պատարագ չմատուցուեցաւ։ Դժբախտաբար, կէս գիշերէն յետոյ եկած առատիկ անձրևներէն Գեթսեմանիի՝ ձորին մէջ հաւաքուած հեղեղները կը խուժեն Ս. Աստուածածնայ տաճարի գաւիթը և մինչև եկեղեցւոյ մուտքին գագաթը բարձրանալով կը խորտակեն զայն ու կը լեցնեն տաճարը՝ մինչև առաստաղ։ Լուսարար՝ Յովհաննէս Երկայնհարսեան խորտակուած դուռի ձայնէն արթննալով մուտքի քով գտնուած իր փայտեայ տաղաւարէն դուրս կը նետուի և տաճարի պատին փարելով՝ հրաշքով կ՚ազատի։

Այս չարաբեր եղելութեան առիթով Յունաց պատրիարքարանի հետ խորհրդակցելով կարգադրութիւններ եղան միանգամայն ջուրը պարպելու և եկեղեցւոյ նախկին յարդարանքը վերահաստատելու։

✱ 6 Յուն Գշ. — Ս. Պատրիարք Հայրը նախագահեց առաւօտեան պաշտամունքին և սարկաւագաց հանդէսին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Ստեփաննոսի մատրան մէջ, պատարագիչն էր Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան։ Ս. Պատարագէն վերջ, Ս. Պատրիարք Հայրը ընդունեց բարեշնորհ սարկաւագները և ուրարակիրները՝ Հոգեշնորհ Տ. Տ. Հայկազուն և Միւռոն Վարդապետներու առաջնորդութեամբ, և շնորհաւորեց իրենց տօնը։

✱ 7 Յուն. Դշ. — Ս. Պատրիարք Հայրը նախագահեց երեկոյեան պաշտամունքին և վաղուան Սրբոց առաքելոցն՝ Պետրոսի եւ Պօղոսի տօնի նախատօնակին։

✱ 8 Յուն. Եշ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ՝ Ս. Պետրոսի վերնատան սեղանի վրայ։ Պատարագիչն էր Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեան։

✱ 9 Յուն. Ուր. — Վաղուան Սրբոց Որդւոցն Որոտման՝ Յակոբայ առաքելոյն եւ Յովհաննու աւետարանչին տօնին առթիւ երեկոյեան ժամերգութենէն անմիջապէս առաջ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը «Հրաշափառով մուտք գործեց Մայր Տաճար և նախագահեց պաշտամունքին և նախատօնակին։ Յետոյ թափօրով առաջնորդուեցաւ պատրիարքարան ուր «Պահպանիչ»էն ետք տեղի ունեցաւ պատուասիրութիւն։

✱ 10 Յուն. Շբ. — Ս. Գլխադրի տօնին առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց առաւօտեան պաշտամունքին, և պատարագեց ու քարոզեց։ Ս. Պատարագէն վերջ, տեղի ունեցաւ «Կենաց փայտի» հանդիսաւոր թափօրը. յետոյ Ն. Ամենապատուութիւն թափօրով առաջնորդուեցաւ պատրիարքարան ուր «Պահպանիչ»էն յետոյ տեղի ունեցաւ պատուասիրութիւն։

✱ 11 Յուն. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր Գողգոթայի մատրան մէջ. պատարագիչն էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան։

✱ 13 Յուն. Գշ. — Երեկոյեան ժամերգութենէն վերջ, Հին Տօմարի Ամանորի առթիւ Միաբանութեան Հոգեշնորհ Հայրերը, Ընծայարանի Բարեշնորհ Սարկաւագներն և Ուրարակիր ու Դպիր աշակերտները, աշխատաւոր եղբայրները և Տեսչութեանց պաշտօնեաները՝ Ս. Պատրիարք Հօր ներկայացան պատրիարքարանի մէջ Նոր Տարին շնորհաւորելու և Նոր Օրացոյցները ստանալու։ Երեկոյեան ընթրիքէն յետոյ, ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեանի նախագահութեան տակ, ներքին հանդէս մը տեղի ունեցաւ ուսուցիչներու և հիւրերու մասնակցութեամբ։

✱ 14 Յուն Դշ. — Ամանորի առթիւ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Աւագ Սեղանին վրայ, պատարագիչն էր Հոգ. Տ. Գարեգին Վրդ. Վրթանէսեան։ Ս. Պատարագէն յետոյ պատրիար-

քարանի մէջ հանդիսական գումարում մը տեղի ունեցաւ։ Գեր. Տ. Եղիշէ Վրդ. Տէրտէրեան յանուն Պատ. Միաբանութեան շնորհաւորական և բարեմաղթական ուղերձ արտասանեց։ Յարգելի Մանուկ Սրկ. Սմբատեան ուղերձ կարդաց Ընծայարանի և Ժառանգ. Վարժարանի սաներուն կողմէ, նոյնը ըրաւ Խաչատուր Խաչատուրեան Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Նախակրթարանի երկսեռ աշակերտութեան կողմէ. իսկ Մանկապարտէզի կողմէ փոքրիկն Հայկանուշ Զըգըրդճեան արտասանեց ամանորի սիրուն ոտանաւոր մը։ Ժառանգ. Վարժարանի սաները երգեցին մէջ ընդ մէջ։ — Նորին Ամենապատուութիւն Ս. Պատրիարք Հայրը զգածուած սրտով իր ջերմ շնորհակալութիւնները յայտնեց Պատ. Միաբանութեան բոլոր անդամներուն, վարժարանաց տեսչութեան, ուսուցչաց և աշակերտութեան՝ իրենց անկեղծ և բարի արտայայտութեանց համար, և տուաւ իր հայրական յորդորները, վերանորոգուած խանդով և հաստատամտութեամբ նուիրուելու Ս. Աթոռոյ սրբազան աշխատանքներուն յօգուտ Եկեղեցւոյ և Ազգին։

✱ 17 Յուն. Շբ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր, պատարագիչն էր Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեան։

✱ 18 Յուն. Կիր. — Ս. Պատրիարք Հայրը Նախագահեց առաւօտեան պաշտամունքին։ Ժամը 10ին տեղի ունեցաւ Բեթղեհէմի հանդիսական գնացքը առաջնորդութեամբ անգլիացի հեծելանիւաւոր ոստիկաններու։ Հակառակ անապահովութեան և երկիւղներուն թափորը իր սովորական կանոնաւորութեամբ Բեթղեհէմի տաճարի մեծ հրապարակին առջև հասաւ խաղաղութեամբ։ Հրապարակը լեցուած էր հայ, յունադաւան և հռովմէադաւան տեղացիներու և ուխտաւորներու խուռն բազմութեամբ։ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը դիմաւորուեցաւ Երուսաղէմի Կառավարչի ներկայացուցչին եւ Բեթղեհէմի Կառավարչի, Քաղաքապետի, Ոստիկանապետի եւ Հայ եւ օտար թաղապետներու եւ մեր Հոգեշնորհ տեսչին կողմէ, եւ եկեղեցական թափորով «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողութեամբ առաջնորդուեցաւ մեր վանքը ուր մուտքի արարողութիւնը աւարտեցաւ՝ Ամեն. Ս. Պատրիարք Հօր «պահպանիչ»ով։ Բարձրաստիճան հիւրերը տեսչարանի մէջ հիւրասիրուեցան սիրալիր ընդունելութեամբ և մեկնեցան կէս ժամ վերջ։

Յետ միջօրէի ժամը 2ին տեղի ունեցաւ «Հրաշափառ»ի արարողութիւնը՝ Նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր։ Սկսելով տաճարի սիւնազարդ Հեթումեան մուտքի առջեւէն, թափորը երգեցողութեամբ յառաջացաւ կեդրոնէն և մեր բաժնի մէջէն իջաւ Ս. Այրը ուր խնկարկութեան և ուխտի արարողութեան կարգը կարդացուելէ յետոյ, մեր եկեղեցամասի Աւագ Սեղանին առջև դասաւորուեցաւ և վերջացնելով «Հրաշափառ»ի մասը, սկսաւ երեկոյեան պաշտամունքը։ Յետոյ մատուցուեցաւ Ճրագալոյցի Ս. Պատարագը. պատարագիչն էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան։ Պատարագէն վերջ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ եւ հանդիսաւոր թափորով ու եկեղեցական լիակատար զգեստաւորութեամբ՝ Միաբանութիւն եւ ժողովուրդ սիւնազարդէն անցան մեր վանքի Ս. Յակոբ մատուռը ուր աւետարանի ընթերցումով և «Փառք ի բարձունս»ի երգեցողութեամբ Ճրագալոյցի Ս. Պատարագը վերջացաւ՝ Ամեն. Ս. Պատրիարք Հօր «պահպանիչ»ով։ Պատարագիչը՝ զգեստաւորուած առաջնորդուեցաւ տաճարի մեր մասը թարգմանի, բարապաններու, մոմակալներու և փէշակիրներու ընկերակցութեամբ՝ անցնելով սիւնազարդ սրահէն, և ըստ սովորութեան մեր Անուանակոչութեան սեղանին առջև զգեստները հանելով վանքի տեսչարան վերադարձաւ։ Նորին Ամենապատուութիւնը շնորհաւորեց Միաբանութիւնը հայրական բարեմաղթութիւններով եւ սեղանատուն իջաւ մասնակցելու Միաբանութեան սեղանին։

Գիշերուան ժամը 10ին, Հոգեշնորհ Հայրերու ընկերակցութեամբ պարզ թափորով՝ բարապաններու և թարգմանի առաջնորդութեամբ իջաւ Ս. Այրը և ուխտը ընելէ յետոյ բարձրացաւ մեր եկեղեցամասը ուր Աւագ Սեղանին առջև ծնրադիր խոստովանանքի արարողութիւնը կատարելէ յետոյ, սկսաւ գիշերային ժամերգութիւնը։ «Տէր յերկնից»էն յետոյ զգեստաւորեալ և թափորով Ս. Այր իջնելով հոն տեղի ունեցաւ ժամերգութեան մնացեալ մասը մինչև «Մանկունք», միահամուռ մասնակցութեամբ Հոգեշնորհ Հայրերու և դպրաց դասի։ Ս. Այրի արարողութեան ներկայ էր Երուսաղէմի Կուսակ. Կառավարիչը իր պաշտօնական զգեստով և պատուանշաններով։ Իրեն կ'ընկերանային Բեթղեհէմի Կուսակ. Կառավարիչը և Ոստիկանապետը և ուրիշ պետական պաշտօնեաներ։ Ս. Այրի պաշտամունքի վերջանալուն հրաժեշտ առին Ամեն. Ս. Պատրիարքէն և մեկնեցան թարգմանի և բարապաններու առաջնորդութեամբ։ Գիշերային ժամերգութենէն վերջ տեղի ունեցաւ գիշերային մեր իրաւունքի Ս. Պատարագը, զոր մատոյց Հոգ. Տ. Միւռոն Վրդ. Կրճիկեան։ Յետ Ս. Պատարագի՝ Նորին Ամենապատուութիւն Ս. Պատրիարք Հայրը քարոզեց ընտրած ունենալով հրեշտակներու երգին բառերը։ Միացնելով զանոնք Յորդանանի մէջ երկինքէն լըսուած աստուածային յայտնութեան բառերուն մեր Տիրոջ ծննդեան և մկրտութեան երկու հրաշալի եւ խորհրդաւոր դէպքերու ծալքերը բացաւ եւ հրաւէր կարդաց ներկայ հաւատացեալներուն որ անոնց լոյսին լիակատար գիտակցութեամբ եւ պահանջուած հաւատքովը ապրին միշտ։ Քարոզէն վերջ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը կատարեց Ջրօրհնեաց զմայլելի արարողութիւնը։ Յետոյ, Նորին Ամենապատուութիւնը մատոյց օրուան հանդիսաւոր պատարագը Ս. Այրին մէջ եւ վերջանալուն մեծահանդէս թափորով Ճրագալոյցի վերջին թափորի կարգով վեր ելաւ մեր վանուց Ս. Յակոբ Եկեղեցին և դարձեալ աւետարանի ընթերցումով և «Փառք ի բարձունս»ի երգեցողութեամբ վերջ գտան Ս. ԾՆՆԴԵԱՆ պաշտամունքի Բեթղեհէմի արարողութիւնները։ — Առա-

տօնական ժամը 8ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը վերադարձաւ Երուսաղէմ, պաշտօնական գնաց-քով, նախորդ օրուան կարգով: Վանուցն աւագ մուտքին առջև իջաւ իր ինքնաշարժէն միաբան-ներէն խուռն բազմութեան մէջ, և դիմաւորուե-ցաւ եկեղեցական դասուն կողմէն և թափորով առաջնորդուեցաւ պատրիարքարան [illegible] մեծ շարականի երգեցողութեամբ: Պատրիարք-արանի մէջ Ն. Ամենապատուութիւնը ընդունեց ընդհանուր տանտերու շնորհաւորութիւններն ու օրհ-նութիւնները տալէ ներկաներուն և բարեմաղ-թութիւններ ըրաւ Մայր Աթոռի, Նորին Ս. Օծու-թեան Վեհափառ Հայրապետի, Կիլիկիոյ Կաթո-ղիկոսական Աթոռի և Գահակալի և Կ. Պոլսոյ Պատրիարքական Աթոռի և Տեղապահի, և բոլոր առաջնորդութեանց համար:

Ճրագալոյցի և Ս. Ծննդեան պաշտամունքները կատարուեցան նոյնպէս ի Ս. Յակոբ և ի Ս. Հրեշ-տակապետ, ժամարարութեամբ Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեանի և Հոգ. Տ. Հայկազուն Վրդ.-ի:

Այս տարի Պաղեստինի մէջ տեղի ունեցած խառնակութեանց պատճառաւ Բեթղեհէմի ելեկտրա-թելերը խանգարուած ըլլալով կարելի չեղաւ ձայնասփիւռ տալ Ս. Այրի արարողութիւնը ինչպէս եղած էր ցարդ: Յոյնք ևս իրենց Ծնուն-դին զրկուեցան ձայնասփիւռէն նոյն պատճառաւ:

※ 20 Յուն. Գշ. — Ս. Ծննդեան մեռելոցի օր-ուան առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նա-խագահեց առաւօտեան պաշտամունքին և ներ-կայ գտնուեցաւ Ս. Պատարագին զոր մատոյց Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան:

— ժամը 10էն սկսեալ, Ս. Ծնունդի և Աս-տուածայայտնութեան տօնին առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ընդունեց հետևեալ տարբեր հոգե-ւոր պետերը. Լատինաց Պատրիարքի Փոխանորդը, Ֆրանչիսկեանց Գիւսդոսը, Անգլիկանաց Եպիսկո-պոսը, Սկովտիացւոց Երիցապետը, Հայ, Յոյն և Գերման կաթոլիկ հոգևոր պետերը իրենց հետե-ւորդներով: Յոյնք և միւս Արևելեան Եկեղեցի-ները՝ ներկայ քաղաքական տխուր պէպքերէն իբրև սգաւորք չունեցան շնորհաւորական ըն-դունելութիւն և ոչ այցելութիւն:

Ինչպէս Դեկտեմբեր 25ին, Եւրոպական Ծնուն-դին շնորհաւորական այցելութեանց առթիւ, նոյնպէս, մեր Ծնունդի ընդունելութեանց առ-թիւ, Նորին Ամենապատուութիւն Ս. Պատրիարք Հայրը հրաւէր ուղղեց բոլոր Հոգևոր Պետերուն որ առանձինն և միաբանաբար ամէն ջանք ի գործ դնեն տառապող Երուսաղէմի ապահովութեան և խաղաղութեան համար:

※ 26 Յուն. Բշ. — Ս. Ծննդեան և Աստուա-ծայայտնութեան Ութօրէից առթիւ Ամեն. Ս. Պա-տրիարք Հայրը ի գլուխ Միաբան Հայրերու Ս. Յարութեան Տաճարը գնաց պաշտօնական գնաց-քով և «Հրաշափառ»ով մուտք գործեց: Ս. Գերեզ-մանին վրայ պատարագեց Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան: Քարոզեց Ամեն. Ս. Պատ-րիարք Հայրը, բնաբան ունենալով Փիլ. Գլ. Բ. 9-12 համարը: Այս խօսքին իմաստը բառ առ բառ պարզելով, վեր հանեց անոր բացարձակ ճշմարտութիւնը և հրաւէր կարդաց հետևելու առաքեալին, անոր հաւատարմութեամբ փարելու Տիրոջ և անոր սրբազնասուրբ անուան: Պատա-րագէն վերջ, Ս. Պատրիարք Հայրը Միաբանութեան հետ պաշտօնական թափորով վերադարձաւ պատ-րիարքարան և հոն շուրջառազգեստ նախագահեց պատրիարքարանի աւանդական տնօրհնէքի ա-րարողութեան: — Երեկոյին նախագահեց Սրբոյն Յովհաննու Ծննդեան նախատօնակին:

※ 27 Յուն. Գշ. — Օրուան տօնին առթիւ Ա-մենապատիւ Ս. Պատրիարք Հայրը նախագահեց առաւօտեան պաշտամունքին և ներկայ գտնուե-ցաւ Ս. Պատարագին՝ զոր մատոյց Հոգ. Տ. Պար-գեւ Վրդ. Վրթանէսեան:

※ 31 Յուն. Շբ. — Ս. Պատարագը մատոյց Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեան ի Ս. Գլխադիր:

## ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

Շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ կ՚արձանագրենք 1947 տարւոյ ընթացքին եղած հետեւեալ նուէրները.

1. Կոստանդնուպոլսեցի Տիկին Մաննիկ Գարա-գզեան՝ Ս. Յակոբայ Մայր Տաճարին՝ մէկ ձեռաց խաչի բռնիչ (կօտ) անկիւնները ասեղնագործուած հին ոճով:

2. Կոստանդնուպոլսեցի Օրիորդ Ֆէրնանդ Թագ-ւորեան՝ Ս. Յակոբայ Մայր Տաճարին՝ մէկ ձեռաց խաչի բռնիչ (ներմակ ատլաս) անկիւններուն մէջ հրեշտակներ ասեղնագործուած:

3. Պր. Երուանդ Ֆէնեան՝ Ս. Յակոբայ Մայր Տաճարին՝ իր հանգուցեալ տիկնոջ Իսկուհիի յիշատակին՝ ձեռագործ սեղանի զգեստ — Տէրունական Ընթրիքի նկարով, ասեղնագործուած (ռուսական) գոյնզգոյն թելե-րով: Յիշատակարան՝ 1932, Ս. Յ. Յիշատակ Իսկուհի Ֆէնեան, Կ. Պ. —, սուրջը ունի արժէք քեզ ժառա-ւէն: — Եւ մէկ կորփուրայ Տէրունական Ընթրիքի նկարով՝ ասեղնագործուած:

4. Հալէպաբնակ Այնթապցի Տիկին Ալիս Քէլէշեան՝ ասեղնագործուած սեղանի ծածկոց մը եւ կորփուրայ մը:

5. Պէյրութաբնակ Ատանացի Այրի Տիկին Վերգինէ Գիւլպիւլեան՝ Յայսմաւուրքի վարդագոյն ծածկոց մը:

6. Պէյրութաբնակ Տիկին Լուսաբեր Գալպագեան՝ ասեղնագործ կորփուրայ մը Ս. Յակոբայ Տաճարին:

7. Պաղտատաբնակ Կարնեցի Օր. Հռիփսիմէ Շի-րինեան՝ երկու աւետարանի բռնիչներ:

8. Պէյրութաբնակ Տիկին Լուսնթագ Պօղոսեան՝ Ս. Աստուածածնայ պատկերին ոսկի մասանի մը:

9. Հալէպաբնակ Տիկին Էլիզա Փանոսեան՝ ասեղ-նագործուած խաչի բռնիչ մը, ներմակ:

10. Երուսաղէմացի Այրի Տիկին Ազնիւ Պէշէկեան՝ արծաթ կանթեղ մը, իր զաւկին, Գաբրիէլի, գործերու յաջողութեանը համար:

Լուսարարապետ

ԵՂԻՇԷ ՎՐԴ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Hagop Vartanian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.